



ԱՅՏԱՆ
ՏՈՄՈՒՆԻ

ԱՐԻԱԳ

ՑԻԼԻԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՆՈՒԱ
ԵՊՈԽՎԱՅԱԼԻՆԻ
Ակադեմիա Խան
ՀՍՀ

825
4-42

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՅԵՐԵՎԱՆ

1934



-8 NOV 2011

Հա 655

Ե. ՍԵՏՈՆ - ՏՈՄՈՒՈՆ

825
U-42

Ապրիլ 19 1980
Խոհեմարդ Հայաստանի Հանրապետության
Գլուխաց և պարզաբանական գիտությունների գործական համակարգի
Գլուխաց և պարզաբանական գիտությունների գործական համակարգի
Գլուխաց և պարզաբանական գիտությունների գործական համակարգի

ՍՊԻՐԻՆԳԹԻԼԴԻ ԱՂՎԵՍ

ՊԱՏՄԱԿԱՆՔ

Թարգմ. ԽՆԿՈ - Ա.ՊԵՐ

Ա. Վ. Ա. Ա. Վ. Ա.
Աղվես

ՎԻԲԼԻՈՏԵԿԱ
ИНСТИТУТА
ՊՇԵՏՈՎԵՃԵՆԻԱ
Պահանջ Խաչ
С С С Р



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ՊԻՐՑՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1934

18.09.2013

989

Գառ. Խմբագիր Ա. Հայրյան
Տեխ. Խմբագիր Տ. Խաչվանյան
Մթքագրիչ Մ. Խորխոսունի



57036-66

Գլուխիտ № 8449 (Բ) Հրատ. № 2879 Պատկր. № 309 Տիրաժ 3000

Գետհրատի տպարան, Յերևան

Առդեմ մի ամսից ավելի յեր, ինչ Սպահնդ-Ֆիլ-
դում հավերն սկսեցին խորհրդավոր կերպով կորչել:
Յերբ յես տուն յեկա ամսուային արձակուրդներին,
հորեղբայրս ինձ հանձնարարեց պարզել հավերի ան-
հայտանալու պատճառը: Այդ հանձնարարությունը
յես կատարեցի: Թուշունները գողացվում եյին թառ
նստելուց առաջ, կամ թե թառից ցած թռչելուց հե-
տո: Այդ ցույց եր տալիս, վոր գողության մեջ մաս-
նակցություն չունեյին վհչ թափառաշրջիկները և
վոչ ել հարեւանները: Կորչողներն ամենաբարձր թա-
ռերի հավերը չեյին, հետեապես պետք եր բացասել
նաև Բուերի մասնակցությունը: Բացի այդ, կեր-
պած թուշուններից տեղում վոչ մի հետք չեր մնում:
Նշանակում ե այդ վոճրագործության պատճառն ա-
քիսները, կզաքիսները, ժանտաքիսներն ել չեյին,
վորովհետեւ նրանք առհասարակ վորսի կեսն ուտում
են, կեսը թողնում: Ուրեմն վոճրագործն ով եր, ով
չեր, իհարկե միայն սանամեր — աղվեսը:

Մեծ երինդելյան սոճու անտառը ձգվում եր գե-
տի մյուս ափում: Յես ուշադրությամբ գիտում եյի
ներքեի ծանծաղուտի ափը: Տեսա աղվեսի մի քանի
հետքեր և մեր չալտիկ վառեկներից մեկի զոլավոր

փետուրը։ Յես չեյի կարող սխալվել, վորովհետեւ հավերի արդ ցեղը, բացի բարձրահասակ լինելը, տարբերվում ե շատ գեղեցիկ չալտիկ փետուրներով։

Բարձրանալով գետի ափը յես լսեցի իմ յետիից ազուամիների բարձր կռողը։ Յետ նայեցի, տեսա ազուամիների մի ամբողջ յերամ, վոր գաղաղած կռուում եր մի ինչ վոր բանի վրա, հենց ծանծաղուտի մոտ։ Յես դիտելով համոզվեցի, վոր ազուամիները զուր տեղը չեն կուազում։ Ծանծաղուտի վրա յեր աղվեսը, ատամներով մի ինչ վոր բան բոնած։ Պարզ եր, վոր նա վերադառնում եր մեր հավանոցից, նոր վորսը բերանում։

Տուն հասնելու համար աղվեսը պետք ե անցներ գետը։ Յեվ ահա այդտեղ, ծանծաղուտում, նա իրեն անապաշտան զգաց ազուամիների մի ամբողջ յերամի դեմ, վորը բարձրաձայն կռողով հարձակվել եր նրա վրա։ Աղվեսը համարձակ ընկավ գետը կտրելու և, իհարկե, իր վորսի հետ անմինաս կհասներ դիմացի ափը, յեթե յես չմիանայի հարձակվող կողմին։

Այդ ժամանակ նա բաց թողեց կիսամեռ հավին ու անհայտացավ անտառում։


Աղվեսը ամեն որ առատ ու կանոնավոր պաշար եր հավաքում և այդ նշան եր, վոր նա ձագեր ունի և արդ ձագերին պետք ե կերակրի։

Իմ նպատակն եր վինտուել ու գտնել աղվեսի ձագերին։

Նույն յերեկոյան իմ բարակի — Ռենջերի ուղեկցությամբ յես գնացի նրանց վինտուելու։ Մենք ան-

ցանք գետը, մտանք երինդեյլյան անտառը։ Հենց վոր շունն սկսեց պտույտ տալ անապում, խիտ մացառներով ծածկված մոտակա վոսից լսվեց աղվեսի կցկոտուր հաջոցը։ Ռենջերն իսկույն հարձակվեց այդ կողմի վրա և գտնելով հետքը, առաջ սրացավ ուղիղ գծով, մինչև վոր ձայնը կորավ խիտ թափուտում։

Մուսավորապես մի ժամից հետո նա ծանր շնչելով վերադարձավ և պառկեց վոտներիս մոտ։ Մական մոտիկից ելի լսվեց աղվեսի բնորոշ հաջոցը։ Ռենջերը նորից գնաց վորոնելու։ Նա չքացավ անտառի մթության մեջ, հյուսիսային ուղղությամբ։



Նրա կոպիտ բարձրաձայն հաջոցը տարածվեց անտառով մեկ, ինչպես շոգենավի շշակի ճիչը մշտչի ժամանակ։ Բարձր հնչյունները — «բուռւ, բուռւ» — աստիճանաբար դառնում եյին ավելի մեղմ «ու ու ու ու», ավելի թուլլ «ուռո-ոռո» և հետզհետեւ լսեցին։ Յերկի շունը մի քանի մղոն հեռացել եր, վորովհետև յես ականջս գետնին դնելով, վոչինչ չլսեցի։ Այն

ինչ Ուենջերի հաջոցի թափ, մետաղլա, ասես պղնձե
ձայնն առասարակ լսվում էր մինչև անգամ մի մղոն
տարածությունից:

Սպասելով նրա վերադարձին, յես ամբողջ հասա-
կովս մեկնվեցի փափուկ մամուռի վրա և պատրաստ-
վում եյի աչքս փակելու, մեկել հանկարծ լսեցի թափ-
վող ջրի քաղցրալուր հնչյունները «Տինկ, տանկ,
տենկ, տինկ, տանկ, տենկ, տոնկ — յերգում եյին ներ-
դաշնակ ջրային կաթիլները»:

Յես չեյի իմանում, վոր այդքան մոտիկ հոսում
ե առուն: Յես վերկացա ու զնացի ինձ կանչող հըն-
չյունների ուղղությամբ:

Մոտեցա մի մեծ կաղնու, վորի մի կողմից գա-
լիս եր կաթիլների արծաթահնչուն ձայնը: Ականջ
դրի: Ինձ տարօրինակ թվաց, վոր կաթիլներն ընկ-
նում եյին վերեկից: Բարձրացրի գլուխս և ուղղակի
ինձ վրա նորից լսեցի յուրահատուկ մեղեղին: Այս
ու այն կողմ լավ դիտելով, հնամյա կաղնու մի հաստ
ճյուղի վրա նկատեցի ինչ վոր գորշ, անշարժ զանգ-
ված: Շուտով այն անորոշ, գորշ բծի փոխարեն տե-
սա մի մեծ յերկարականջ բու:

Յես վոր մոտեցա, «Կաթկաթող ջրի յերգը» լսեց:
Բուն անհանգիստ շարժվեց իր նստած ճյուղի վա և
անաղմուկ թռավ ողի մեջ:

Այստեղ լսվեց տերեների հանկարծակի շրջոցը և
Ուենջերի խոպոտ շնչառությունը: Ուենջերը բոլորովին
ուժասպառ եր յեղել: Նրա լեզուն կախվել եր համար-
յա թե մինչև գետին և նրանից լորձունք ու փրփուր

եր թափվում: Կողերն ուռել եյին դարբնի փուքսի
պես: Թե կողերի և թե կրծքի վրայից կախվել եյին
փրփուրի պատառները: Ուենջերը կանգ առավ ինձ մոտ
խիստ հեալով ու փնչալով, ընկավ գետին ու ձգվեց
տերեների վրա, խեղեկով իր շուրջն ամեն ինչ իր
բարձր հեհեցով:

Հանկարծ նորից լսվեց աղվեսի գայթակղեցնող
հաջոցը, այս անգամ մեղանից բնդամենը մի քանի
քայլ հեռավորության վրա, և այդտեղ միայն յես
հասկացա նրա նշանակությունը:

Մենք գտնվում եյինք հենց աղվեսի վորջի մոտ,
վորտեղ թագնված եյին նրա փոքրիկ ձագերը: Նը-
րանց ծնողները հերթափոխվում եցին, վոր մեր ու-
շաղրությունը զրավեն ու մեզ հեռացնեն վորջից:

Բայց արդեն ուշ դիշեր եր և այդ պատճառով
մենք վերադանք տուն հաստատ հավատացած լի-
նելով, վոր մեր ինդիրն արդեն համարյա լուծված եւ:

II.

Բոլորին լսվ հայտնի յեր, վոր մեղանից վոչ հեռու
մի ինչ վոր տեղում ամլրում ե աղվեսն իր եղի և
ձագերի հետ: Բայց վոչ վոք չեր իմանում, թե նրանք
այդքան մոտ եյին գտնվում:

Այդ աղվեսին կանչում ելին «Նշանով աղվես»,
այն յերկար քերծվածքի համար, վոր աչքի տակից
սկսած հասնում եր մինչև ծոծըակն ու անցնում ա-
կանջը: Յենթաղրում եյին, վոր այդ հին վերքի հետք
եր, վոր նա ստացել եր ցանկապատի փշոտ լերկա-

թալարերից, ճագար վորսալու ժամանակ, Յերբ վերքը լավացավ նրա տեղն սպիտակ գույնի մազ բուսավ: Իհարկե դա աղվեսին ճանաչելու լավ նշան դարձավ

Յես դեռ անցյալ ձմեռը սկառահել ելի այդ տղավեսին և վորոշ գաղափար կազմել նրա խորամանկությունների վերաբերմանը: Բանն այսպես եր: Հենց վոր ձյունն լեկավ, յես դնացի վորսի: Դուրս դարձված, հասա մացառապատ հովտի յեզրը, հին ջրադացի յետել:



Այն տեղ, հովտում տեսա աղվեսին, վորն իջնում եր հովտի հակադիր զառիվարով, հենց իմ ճանապարհին դեմ առ դեմ: Յես անշարժ կանգնեցի, մինչև անգամ զլուխս ել չշարժեցի, վոր նրա ուշագրությունը գրաված չլինեմ, մինչև վոր նա անհայտացավ ձորակի խիտ թափուտում: Հենց վոր նա չքացավ, յես իսկուն ցած թռա ու սկսեցի վազտաւ, վոր նրան հանդիպեմ ուսենու մացառուտների

մյուս կողմում, վորտեղ նա պետք ե դուրս դար: Բայց աղվեսը չհայտնվեց: Մանրազննին դիտելուց հետո յես նկատեցի աղվեսի թողած թարմ հետքը, վոր դուրս եր գալիս թփերի տակից: Հետեւելով այդ հետքին, վերջապես տեսա նշանով աղվեսին: Բայց նա արդեն շատ հեռու յեր ինձանից:

Հետքերի մանրազննին դիտողությունը շուտով պարզեցին ամեն ինչ: Նշանովը նկատեց ինձ հենց այն վարկյանին, յերբ լես տեսա նրան: Բայց փորձված լինելով վորսորդի հետ ունեցած հանդիպումներից, նշանովը թագցրեց այդ և շատ անտարբեր ձեռքացավ, մինչև վոր անհայտացավ:

Գարնանը մի անգամ ել ինձ դեպք պատահեց համոզվելու թե ինչքան խորամանկ ե նշանովը:

Յես ու բարեկամս զբունում եյինք հովտի վերնի մասի ճանապարհի վրա: Զրույց անելով մենք անցանք գետնին ընկած մի քանի գորշագույն ու զարչնազույն ճալաքարերի մոտով: Յուց տալով նըրանցից մեկը, բարեկամս ասաց:

— Յերբորդ քարը ձախից շատ նման ե թվում կծիկ դարձած աղվեսի:

Յես այդպիսի նմանություն չգտա և մենք անցանք նրա մոտով:

Բայց հանկարծ ինձ թփաց, թե քամու ուժգին հոսանքից քարի վրա բուրդ եր շարժվում:

— Տեսնում եք, հարցրեց բարեկամս յես հավատացած եմ, վոր նա աղվես եք:



— Իսկուն կտեսնենք, — պատասխանեցի յես ու յես դարձա:

Բայց հենց վոր վոտս գուրս դրի ճանապարհից, տեսա վոր աղվեսը թռավ տեղից ու պուկ, փախավ: Այդ Նշանովն եր:

Տափաստանի հրդեհը մինչ այդ ալբել եր արոտի մի մասը, թողնելով մերկ հողի լայն, սև շերար: Նշանովն շտապ կտրեց-անցավ այդ շերար և հասնելով կրակից անմաս մնացած դեղնագույն կանաչին, իսկուն թագնվեց նրա մեջ ու չքացավ մեր աչքից: Պարզ ե, վոր նա ամբողջ ժամանակ հետեւմ եր մեզ, և յեթե մենք ճանապարհը չծռեցինք, նա տեղից չեր շարժվի: Ամենից զարմանալին այն չեր, վոր նա նմանվում եր կլոր քարերին և չորացած խոտերին, այլ այն եր, վոր կարողանում եր ոգտվել այդ հանգամանքից:

Յես գլխի ընկա, վոր յերեկվա գտածս աղվեսների վորջը պատկանում եր Նշանովին ու նրա եղին վորոնք արդեն ձագերի տեր ելին դարձել և նրանց համար իմ հորեղբոր հավանոցից հավ եյին թոցնում:

Հետեվյալ առավոտ մենք խուզարկեցինք սոճու անտառը, այնտեղ գտանք փխրուն հողի մի մեծ կույտ: Ինչպես յերեսում եր, նոր եր վորված, վերջին ամիսների ընթացքում: Այդ հողը, իհարկե, վորված եր մի վորևե վորջ շինելու համար, բայց վո՞չ մի տեղ վորջը չեր յերեսում:

Մինչդեռ հայտնի յե, վոր յեթե աղվեսն իր համար նոր վորջ վորելու կարիք ունենա, ամբողջ հո-

ղը դուրս կտանի առաջին անցքով, բայց մինհույն ժամանակ այդ անցքից մի ուրիշ ստորերկրյա անցք կրանա դեպի վորևե հեռավոր թափուտ: Հետև կծածկե առաջին, լավ նկատվող անցքը և կ'սկսի ներս ու դուս անել թափուտում թագցրած անցքով:

Ման գալով այդ հողակույտի շուրջը, յես գտա դեպի վորջը տանող խսկական անցքը և համոզվեցի, վոր այնտեղ ապրում են աղվեսի ձագերը:

Թփուտից վերև, բլրի լանջին կանգնած եր մի ամերիկյան լորենի: Այդ ծառը սաստիկ թեքվել եր ու արձատի մոտ ուներ մի մեծ փշակ: Մի փոքր փշակ ել կար վերեսում:

Մանուկ որերում Ռոբինզոն խաղալիս մենք ոգտվում ելինք այդ ծառից: Այդ խաղը հնարել ելինք առաջին անգամ կարդալով այն զիրքը, վորտեղ նկարագրված եյին Ռոբինզոն կրուզոյի արկածները: Ռոբինզոն կրուզոն իւնթարկվել եր նավաբեկության, ծովը նրան դուրս եր գցել մի անմարդաբնակ կղզի, վորտեղ նա ապրել եր շատ յերկար տարիներ:


Մենք լորենու փշակի փափուկ փտած պատերում աստիճաններ եյինք փորել Այդ աստիճաններով հեշտ եր բարձրանալ ու իջնել:

Հենց այդ աստիճաններն ինձ հիմա շատ պետք յեկան: Հետեվյալ առավոտ, յերբ արել տաքացրեց գետինը, յես աստիճաններով բարձրացա վերի փշակը և այստեղից կարողացա միանգամայն հանգիստ դիտել հետաքրքրական ընտանիքը, վոր ապրում եր վորջում:

Ընտանիքը բաղկացած եր Նշանով՝
հորից, լղարիկ, շիկագույն մորից և չորս
փոքրիկ, շատ սիրառնիկ ձագերից;
Նրանք արեի տակ



Խաղում եյին կուվելով, զզզելով իրար, մինչև վոր մի թեթև աղմուկ ստիպեց նրանց խակույն թագնվել վորջում։ Մի քանի վալրկյանից հետո պարզվեց, վոր աղմուկի բուն պատճառը նրանց մալրն եւ Նա դուրս յեկավ թփերի տակից, բերանում մի հավ մեր հավանոցից, հաշվով տասնյոթերորդը, յեթե չեմ սխալ վում։



Թփերի տակից դուրս դալով, նա կամացուկ հաջեց, Զագերը գլխակոնծի տալով գլորվեցին նրա առաջ։ Այդտեղ տեղի ունեցավ մի տեսարան, վորը շատ հիանալի յեր, բայց հազիվ թե իմ հորեղբոր սրտովը լիներ, չարաբաստիկ հավանոցի տեր հորեղբորս։

Աղվեսի ձագերը հարձակվեցին հավի վրա, ըսկսեցին քաշել, կռվել նրա համար, իսկ մայրը շարունակ նայում եր շուրջը, չենի թե թշնամին վրա տա, ու միենույն ժամանակ մի առանձին ցնծությամբ հսկում եր իր ձագերին։ Նրա դնչի արտահայտությունը շատ ուշազրավ եր։ Սկզբում այն հիշեցնում եր հրձվանքով լի մի ժպիտ։ սակայն մոր հայացքում զգացվում եր մշտական հուզմունք և աղվեսի բնավորությանը հատուկ վայրենություն։ Այդտեղ կար և անդիւթյան նշան, բայց այդ բոլորի վրա պարզ իշխում եր մայրական սիրո և հպարտության անբացատրելի արտահայտությունը։

Իմ լորենու ներքեսի մասը կորչում եր թփերի մեջ և դտնվում եր շատ ցած այն բլրակից, վորտեղ փորված եր աղվեսի վորջը։ Այդ պատճառով յես յերը ել ողենայի, կարող եյի գալ ու դնալ, առանց անհանգստացնելու աղվեսի ընտանիքը։

Յերկար ժամանակ յես գնում եյի այնտեղ և դիտում, թե ինչպես եյին մեծանում ու կը թվում աղվեսի ձագերը։ Նրանք վաղ սովորեցին քարե արձան դառնալ մի փոքր կասկածելի ձայն կամ իշխշոց լաելիս։ Յեթե աղմուկը շարունակվում եր կամ անհանգըստության մի ուրիշ առիթ եր ծագում, այն ժամանակ նրանք խակույն մտնում ելին իրենց վորջը։

Մեր պաղատու այգում, բլրի վրա, ապրում եր մի արջամուկ (սյորօք): Նա վոչ գեղեցիկ եր, վոչ հետաքրքիր, բայց շատ լավ գիտեր գլուխ պահել: Նա իր բունը փորել եր սոճու կոճղի արմատների մեջ, Պետք ե ասել, վոր աղվեսները, առհասարակ աշխատանք չեն սիրում, իուլյս են տալիս աշխատելուց: Նրանք ավելի շատ վստահում են իրենց խորամանկությանը և համարում են այն ավելի նպատակահարմար, քան թե միանների աշխատանքը:

Արջամուկը սիրում եր ամեն առավոտ տաքանալ արեկ տակ կոճղի վրա պառկած: Տեսնելով աղվեսին, նա խկույն ցած իջավ գեպի իր բնի մուտքը: Յեթե թշնամին մոտենար, նա կմտներ իր բունը և կմնար այնտեղ այնքան, մինչև վոր համոզվեր, թե վտանգն անցել ե:

Մի առավոտ նշանովն ու իր եզր վորոշեցին, վոր ժամանակ ե իրենց ձագերին ծանոթացնել արջամկների սովորությունների ու վարած կյանքի հետ: Դրա համար նրանք յերկուսով ուղեվորվեցին գեպի այգու ցանկապատը: Ծեր արջամուկն այս անդամ չնկատեց նրանց մոտենալը:

Նշանովը յերեաց այգում և ուղիղ գծով հանդիսագ, վորոշ տարածությամբ հեռանալով կոճղից: Առաջ շարժվեց, նա վոչ մի անգամ յետ չնայեց, վոր միշտ արթուն արջամուկը չկասկածի, թե իրեն նկատել ե աղվեսը: Յերբ նշանովը դուրս յեկավ բացատ, արջամուկը ցած սողաց գեպի իր բնի մուտքը: Նա

այնտեղ սպասեց, վոր թշնամին ավելի հեռանա: Բայց վորոշելով, վոր ավելի լավ ե զգուշություն պահպանել, մտավ բունը:

Հենց այդ եր պետք աղվեսներին: Եզր, վոր մինչեայդ ժամանակ աշխատում եր չերեալ արջամկան աշքին, հիմա արագ վազեց գեպի կոճղը և թագնվեց նրա հետեր, նշանովը շարունակում եր իր ճանապարհը, բայց շատ դանդաղ եր գնում: Արջամուկը, վորը սովոր եր տեսնել աղվեսին իր բնի շուրջը մանգալիս, իսկի յել չվախեցավ, դուրս հանեց իր գունչը և սկսեց նայել արմատների միջից: Նա տեսավ, վոր



աղվեսն ավելի ու ավելի յեր հեռանում: Աղվեսը քանի հեռանում եր, արջամուկն այնքան համարձակ եր դառնում: Նա դուրս յեկավ, չորս կողմը դիտեց և բարձրացավ կոճղի վրա: Այդ տեղ եղ աղվեսը վրա թռավ, բռնեց նրան և այնքան քաշքաց, այնքան գզզեց, վոր նա կորցրեց իր գիտակցությունը:

Նշանովը չկորցնելով աչքից իր եղին, իսկույն շտապեց նրան ոգնելու, բայց եզը չսպասեց նրա վերադարձին և արջամկանը բերանն առած, ուղեկորվեց իր վորջը:


Եզ աղվեսն արջամկանը տանում եր ալնպիսի մի
զգուշությամբ, փոք արջամուկը ճանապարհին ուշքի
յեկավ և կարողանում եր մի քիչ պաշտպանվել:

Վորջի մուտքի մոտ մոր թեթև հաջոցը դուրս բերեց իր ձագերին: Նա վիրավոր կենդանուն քաշ արվեց ձագերի մոտ, վորոնք հավաքվեցին նրա վրա: Զագերը մոնչում ելին իրենց բարակ ձայներով և կծոտում նրան իրենց փոքրիկ ծնոտներով: Բայց արջամուկը կատաղի կռվում եր և նրանց յետ տարով, իրեն գցեց թփերի մեջ: Ազվեսի ձագերն ընկան նրա յետեից ճիշտ փորսի շների նման: Կախ ընկան նրա պոչից ու կողքերից, բայց դարձյալ չելին կարողանում նրան պահել: Այդ ժամանակ նրանց ոգնության հասավ մայրը: Յերկու ցատկում անելով, բոնեց նրան և դուրս տարավ անտառի բացատը՝ ձագերի զվարճության համար:

Այդ անողոք խաղը մի քանի անդամ կրկնվեց,
մինչև զոր ուժասպառ արջամուկը կծեց աղվեսի ձա-
ղերից մեկին։ Արջամուկի կծած ձաղի հուսահատ
վժժոցն ստիպեց մորը ցատկել և խսկույն վերջ դնել
արջամուկի տանջանքներին։ Մայրը թողեց ճաշի
համար արջամկան համեղ միսը։

Մի այդպիսի դործնական դաս հարկավոր եք սկզբունքն: Այդ աղմէկարար արարածներից մեկը, վորբի ապրելու տեղը հեռու չեր, անու թե ինչ եր անում, ամեն որ, մի վորոշ ժամանակ նստում եր աղվեսներին անմատչելի մի ճյուղի վրա, կարծես թե աղվեսների գլխին հայիոյանք եր թափում, վորն արտահայտում եր անհանգիստ, ծլծլան ձայներով և մի զվարճալի ծպծպոցի: Աղվեսի ձագերը շատ անգամ սկզբունքն բոնելու ապարդյուն փորձեր ելին անում, այդ ելայն ժամանակ, յերբ նա ծառից ծառ եր թըսչկոտում, կամ թե հայիոյում եր և մի կես արշին տարածությունից թքում եր նըանց վրա: Բայց բոնել նըան, իհարկե, չեյին կարողանում: Եդ աղվեսը, նըանց մայրը, լավ գիտեր սկզբունքի բնափորությունը: Նա անցավ սկզբունքն բոնելու գործին, հենց վոր հասավ դրա համար բարենպաստ ժամանակ:

57036.66



Նա իր՝ ձագերին թագցրեց խոտերի և թփերի մեջ, իսկ ինքը պառկեց յերեսի վրա մի լայն, բաց,



ծառահատ տեղ: Ճարդիկ սկյուռը լերնաց և սկսեց
իր ամբողջ ուժով ծագմացնել ու ծառից թքել աղ-
վեսի վրա, ինչպես անում եր միշտ: Բայց աղվեսն
իսկի ականչն ել չշարժեց: Այն ժամանակ սկյուռն
ել ավելի մոտեցավ: Աղեսը մեռածի պես պառկած եր:
Այդ բանն սկյուռի համար շատ տարորինակ եր: Յեզ
դրահամար նա ծառից բնով ցած իջավ, դիտեց իր

շուրջը, խոտերի վրայով արագ
վագեց գեպի մի ուրիշ ծառ,
վորտեղից շարունակեց իր ու-
շունցը կրկնակի ջանքով: Սա-
կայն աղվեսը շարունակում եր
խոտի վրա պառկած մնալ ինչ-
պես մի անշունչ դիակ: Սկյուռը բնությունից հետա-
քըրքրվող եւ Կարկածներ եւ սիրում: Դրա համար նա
նորից իջավ ծառից և բացատով վագեց, ել ավելի
մոտեցավ աղվեսին: Վերջինս ելի չշարժվեց: Այնպես
անշարժ եր պառկել գետնին, վոր մինչև անդամ նրա
փոքրիկ ձագերն ել անհանդստացան — չինք թե իս-
կապես մեռել եր իրենց մայրը:

Սկյուռն ուղղակի խելքահան եր լեղել հետաքըրք-
ըրությունից: Նրա համարձակությունն ու անզգուշու-
թյունն այնպիսի չափերի եյին հասել, վոր նա մինչև
անդամ ծառի կեղել շպրտեց աղվեսի գլխին: Բայց
դրանից ել բան դուրս չեկավ, վորովհետև աղվեսը
կյանքի վորես նշան ցուց չտվեց: Սկյուռը մի յեր-
կու-յերեք անդամ ել վագեց բացատի յերկարու-
թյամբ և ալնքան միրտ առավ, վոր բոլորովին մո-

տեցավ աղվեսին, վորը հենց դրան եր սպասում,
վոտի կանգնելով, նա կայծակի արագությամբ բռնեց
սկյուռի կոկորդից և տեղն ու տեղ խեղդեց նրան:

Աղվեսի ձագերի կրթության հիմքն այդպես եր
դրված: Հետո, յերբ նրանք մեծացան, մայրն սկսեց
նրանց տնից հեռու տանել, վոր հետզհետեւ սովորե-
ցընի ինքնուրուցն կյանքի:

Գաղանների մեջ կրթության գլխավոր յեղանա-
կը — այդ նրանց սովորեցնող ծնողների որինակն եւ:

Ահա այդ կանոններից մի քանիսը, վոր յուրաց-
ըել եյին աղվեսի ձագերը:

«Յերբեք չքնես քո ուղիղ հետքի վրա»:

«Քիթը միշտ աշխատեց առաջ եւ գնում, դրա հա-
մար ել ամենից առաջ նրան հավատա»:

«Միայն հիմարն եւ քամու գեմ վազում»:

«Հոսուն ջուրն ազատում եւ շատ փորձանքներից»:



«Յեթե քեզ հարկա-
վոր եւ գնալ մի վորեե
տեղ, ավելի լավ եանց
նես թափուտներով, և
վոչ թե բաց տեղե-
րով»:

«Յերբեք ուղիղ հետք
չթողնես, յեթե կարող
ես վոլորտապտույտ հետք թողնել»:


«Այն, ինչ վոր դու առաջին անդամն ես տեսնում,
միշտ կասկածելի յեւ և հաճախ վտանգավոր»:

«Փոշին ու ջուրը վոչնչացնում են հետքը»:

«Յերբեք մուտք վորսալու մի գնա ճագարների բակը, վորի ցանկապատը փշոտ յեղաթալարերից և ձագար վորսալու համար գնա հավանոց»:

Այդ կանոնների նշանակությունը հետզհեաւե ոլպավորվում եյին աղվեսի ձագերի հիշողության մեջ: Որինակ, նրանք գիտեցին, վոր հարկավոր չե գնալ այն հետքով, վորից վոչ մի հոտ չես առնում և այդ շատ իմաստուն կանոն եր, վորօվիետև ինքդ յեթե նրա հոտը չես առնում, ում յետեսից գնում ես, ուրեմն նշանակում ե քամին փշում ե մի այնպիսի ուղղությամբ, վորով քո հոտը ուրիշին ե տանում:

Նրանք քիչ-քիչ ճանաչեցին բոլոր թնջուններին ու գազաններին, վորոնք ապրում եյին իրենց հայրենի անտառում, իսկ ավելի ուշ, յերբ այնքան մեծացան, վոր կարողանում եյին ուղեկցել իրենց ծնողներին ավելի հեռավոր ճանապարհորդությունների ժամանակ, նրանք, այդ փոքրիկ աղվեսները, ճանաչեցին և ուրիշ կենդանիների: Շուտով նրանց այնպես թվաց, վոր իրենք ճանաչում են այն բոլորի հոտը, վորոնք շարժուն են: Բայց մի անգամ մայրը



դաշտ բերեց նրանց, վորտեղ գետնին ընկած եր մի տարօրինակ տափակի իր: Մայրը դիտմամբ բերեց իր ձագերին, վոր նրանք հոտոտեյին այդ իրը, բայց հենց վոր նրանք մոռեցան ու հոտն առան, իսկույն փշաքաղվեցին, մա-

գերը բիզ-բիզ կանգնեցին, աղվեսի ձագերը դողացին, իրենք ել չիմացան թե ինչից. կարծես թե այլ հոտը նըանց լցրեց ատելության ու վախի բնական զգացմունքով:

Այս իրն ել ուրիշ բան չեր, այլ կոշկից պոկված ներբան, կոշկի տակ զցած հաստ կաշին:

III

Մեր հավանոցից հավերի անհայտանալը դարձալ շարունակում եր, բայց յես աղվեսի վորջի գաղտնիքը բաց չելի անում: Ճիշտն ասած, փոքրիկ աղվեսաձագերն ինձ ավելի դուր եյին գալիս, քան թե մեր ամենալավ հավերը: Բայց հորեղբայրս լցված եր ատելությամբ և շատ արհամարանքով եր խոսում իմ վորսորդական ընդունակությունների և անտառի վերաբերյալ իմ գիտելիքների մասին:

Նրան բավականություն պատճառելու համար յես ուղեվորվեցի անտառ, հետս տանելով իմ բարակին: Հասնելով բաց սարալանջը, նստեցի մի կոճղի վրա և հրամայեցի շանս, վոր վորոնի:

Մի քիչ հետո շան հաջոցից յես հասկացա, վոր նա հալածում ե աղվեսին դեպի իմ կողմը: Յեկտեսա նշանով-աղվեսին, վորը թեթև վոստիւններով վազում եր դեպի գետափը: Ցատկերով ծանծա-



զուտի վրա, նա վագում եր ծանծաղ ջրի միջով, ափի իերկարությամբ, իսկ հետո սարալանջով յեկավ ուղիղ դեպի ինձ, նշանով աղվեսն ինձ չեր տեսնում, բարձրացավ ըլուրը և ուսի վրայով նայում եր շանը: Ինձանից յերեք մետր տարածության վրա նա նստեց մեջքը դեպի ինձ, և վիզը յերկարացրած, մեծ բախանությամբ դիտում եր շան գործողությունները:

Ունջերը հաջելով վագում եր նրա հետքով, մինչև վոր հասավ հոսուն ջուրը, վորն աղվեսի հետքի հոտը քշելաբել եր: Շունը տարակուսանքի մեջ ընկավ: Մնում եր միայն մի բան,—Յերկու ափով վեր ու վար անել, վորպեսզի գտնի այն տեղը, վորտեղ աղվեսը ջրից ափ ե գուրս յեկել:

Նշանովը, նստած նույն տեղը, մի քիչ փոխեց իր դիրքը, վոր լավ տեսնի շանը: Նա հետեւում եր Ունջերին իսկական մարդկային հետաքրքրությամբ: Նա ինձ այնքան մոտ եր գտնվում, վով յես տեսա, թե ինչպես նրա բաշի մազերը մի քիչ փշաքաղվեցին շան յերեալու ժամանակ: Յես մինչեւ անգամ կարողանում եյի նկատել նրա շփոթությունները և դեղին աչքերի փայլը: Ծիծաղելի յեր նրա վրա նալելը, յերք ակներեւ դարձավ, թե նա ինչպես խաբեց շանն իր




խորամանկությամբ: Նըշանովը չեր կարողանում նստել իր աեղը, ուրախ որորվում եր, ժամանակ առ ժամանակ բարձրանալով յետին թաթերի վրա, վոր լավ տեսներ

գետի ափով թափառող, հոգնած շանը: Ժպտալով համարյա մինչեւ ականջները, նշանով-աղվեսը մի ըռպելի չափ բարձր վնչում եր և աղմկելով շնչում, կամ ավելի շուտ ուրախ ծիծաղում, ինչպես շներն են անում, վիճալով ու կրծտացնելով ատամները:

Ծերուկ նշանով-աղվեսն սկսեց թփրտալ հըլճվանքից, յերբ տեսավ, վոր իր թշնամին յերկար դեսպեն ընկավ հետքը գտնելու և միայն այն ժամանակ գտավ, յերբ հետքը կորչում եր և նրա հոտը չեր դդացվում:

Պարզ եր, վոր՝ շան համար դժվար եր աղվեսին



վորոնել, և իհարկե չարժեր հաջոցով իմաց տալ իր գյուտի մասին: Հենց վոր շունն սկսեց բարձրանալ ըլուրը և վազել դեպի ինձ, աղվեսը հանգիստ գնաց անտառ: Յես նստել եյի նրանից հեռու մի բաց տեղ,

քամու դեմ և վոչ մի անգամ տեղիցս չշարժվեցի:
Նշանովս այնպես ել չխմացավ, վոր իր կյանքը
քսան ըսպեյի ճափ գտնվում եր իր ամենասարսա-
փելի թշնամու իշխանության տակ:

Մենչերը հենց այն ե, պիտի անցներ իմ մոտից,
բայց յես կանչեցի նրան: Մի քիչ թափահարեց իրեն,
ամաչելով նայեց ինձ ու պառկեց վոտներիս մոտ:

Այս փոքրիկ կատակերգությունը մի քանի
անգամ կրկնվեց: Վերջապես, հավերի ամեն որպա-
կորուստը համբերությունից դուրս բերեց հորեղ-
բորս: Նա գնաց փոքրի և մի բաց տեղ, բլրի վրա
նստեց: Յերբ Նշանովը կրկին դուրս յեկավ և դիրք
բռնելով սկսեց դիտել ու հետեւիլ շան շարժումնե-
րին, հորեղբայրս կրակեց ուղիղ նրա մեջքին հենց
այն վայրկյանին, յերբ նա ծիծաղում եր, ուրախա-
նալով իր նոր հաղթանակի վրա:

IV


Բայց հավերի անհայտանալը դարձալ շարունակ-
վում եր: Հորեղբայրս վճռեց անձամբ դեկավարել
աղվեսների դեմ մղվող կոփը: Այդ նպատակով շր-
ջակա անսատառում նա ցանեց թունակոր, բայց հրա-
պուրիչ ուտելեղեն այն հաշվով, վոր շները թույնի
հոտն առնելով, չեն մոտենա նրանց: Իմ անսատային
դիտության վրա հորեղբայրս շարունակում եր ծի-
ծաղել և ամեն լերեկո հրացանն առած, յերկու շան
հետ դուրս եր գտիս վորսի:

Հորեղբորս սպանած Նշանով-աղվեսի եղը շատ

լավ եր իմանում, թե ինչ են այդ թունավոր հրա-
պուրանքները: Նա կամ նրանց չեր դիպչում կամ լի-
ովին արհամարում եր նրանց լինել կամ չլինելը: Այդ
հրապուրանքներից մեկը նա մինչեւ անգամ տարավ
գցեց իր հին թշնամու, ժանտաքիսի բունը: Դրանից
հետո ազդ ժանտաքիսն այլևս չեր լերեկում:

Առաջ իր վորջը շներից պաշտպանողն ինքը,
Նշանով-աղվեսն եր, բայց հիմա, յերբ նա այլևս
չկար, ձագերի ապահովության ծանր հոգսն ընկած
եր միայն մոր վրա: Վերջինս աշխատելով յերկուսի
տեղ, արգեն ժամանակ չեր ունենում վոչնչացնելու
դեպի վորջը յեկող հետքերը:

Մի անգամ մենչերը գնաց դեպի վորջը մի թարմ,



ա:աք հետքով, իսկ մյուս շունը՝ Սկոտը, հոտքաշելով
իմացավ, վոր աղվեսի բոլոր ձագերն իրենց վորջու-
մն են:

Վորջատեղի պաղտնիքն արդեն բացված եր, առ
բողջ ընտանիքն ել մահվան մատնված:

Բանվորն յեկավ լինգով թիակով վորջը վորելու,
իսկ մենք շների հետ կանգնած սպասում ելինք հենց
այն տեղ: Շուտով մոտակա անտարից յերեաց եղ
աղվեսը և իսկույն իր հետեւից քաշ տվեց շներին,

վորոնք գետի հոսանքով սլացան ներքեւ, նա այնանեղ հարկավոր վարկյանին բաժանվելով շներից, թռավ դիմացից յեկող վոչխարի շալակը: Անաբեկված կենդանին աղվեսը շալակին վաղեց միքանի հարյուր քայլ, ապա աղվեսուհին թռավ գետին, լով զիտենալով, վոր իր հետքն արդեն խճճված ե, սկզբնական տեղից ընդհատված: Դրանից հետո նա հանդիսատ գնաց դեպի իր վորջը: Բայց շներն ել հետքը կորցնելով, վերադարձան հին հետքով աղվեսի վորջը: Շուտով մենք տեսանք, վոր աղվեսը հուսահատ վաղվում ե իր վորջի շուրջը, ամեն կերպ աշխատելով հեռացնել շներին ալնտեղից:

Բանվոր Պողին ել սրտանց գործում եր լինգով ու թիակով: Դեղնազույն, խոշորահատ ավագի յերկու կույտը բարձրանում եյին բանվորի յերկու կողմերից, այնպես վոր նրա ուսերն ելին յերեսում բացված փոսի վրա: Այդպես նա մոտ մի ժամի չափ աշխատեց աղվեսի հետեւից ընկած շների բարձրածայն հաջոցի տակ:

— Ան նրանք. պարոն, — բացականչեց, վերջապես, Պողին:

Վորջը բացված եր: Ստորերյա մուտքի ծայրին գտնվում եյին չորս հատ թափամազ աղվեսաձագ, վորոնք այնքան խորն եյին թագնվել, վորքան այն հնարավոր եր:

Մինչև իմ միջամտելը թիակի մահացու հարվածը և Սկոտ շան հանկարծակի հարձակումը յերեք աղվեսաձագի հաշիվը տեսան: Յես հազիվ կարողացա աղատել չորրորդին, ամենից վորքը ձագին, Բոնեցի նրա

պոչից և այնքան բարձրացը, վոր կատաղած շները չհասան նրան:

Նա բարձր, հուսահատ վնդվնդում եր և այդ վընդվընդոցի վրա դուրս թռավ թշվառ մայրն իր ապաստանից: Նու պատվում եր այնտեղ ե, ինարկե գնդակի տակ կընկներ, յեթե չկիներ պատահական պաշտպանությունը: Շներն ել եյին արդտեղ պտուտաղիս, նրանք ել կարող եյին գնդահարվել: Հենց այդ եր պատճառը, վոր վորսորդները հրացան չեյին կրակում:

Կենդանի մնացած փոքրիկ աղվեսաձագը տոպրակի մեջ, վորտեղ նա հանգիստ պառկել եր, իսկ նրա շարաբախտ յեղբայրներին նորից նետեցին վորջը և հողը վրա տվին:

Մենք, այդ կոտորածի մեղսակիցներս, վերադարձանք տուն և մեր փոքրիկ գերուն շղթայով կապեցինք բակում:

Կենդանի մնացած ձագն իրենից ներկայացնում եր մի շատ լավիկ, փոքրիկ արարած: Նայելով նրա սուրլիկ գնչին, կարելի յեր նրա գեղնազույն աշքերում նկատել մի խորամանկ և վայրենի կրակ:

Յեթե մեկը մոտենում եր ձագին, նա բարկացելու մանում եր իրեն բնի տեղ ծառայող արկղը և մի ամբողջ ժամ մնում եր այնտեղ:

Իմ սենյակի լուսամուտները հիմա փոխարինեցին այն հին լորենուն, վորի փչակից յես առաջ դիտում եյի աղվեսի ընտանիքը: Հիմա բազմաթիվ հավեր ամբողջ որերով շրջապատում եյին աղվեսի ձագի բունը:

Նրա գերության առաջին որը, յերեկոյան դեմ հաշվերը շատ մոտեցան նրան: Շղթան հանկարծ զնդաց, աղվեսի ձագը հարձակվեց ամենամոտիկ հավի վրա: Նա անշուշտ կը ոներ հավին, յեթե շղթան նրան լետ չքաշեր: Նա անսպասելի հարվածից փովեց գետին, ապա մտավ բունը:

Հետո նա շատ անդամ փորձում եր հավ բոնել, բայց միշտ ել այն հաշվով, վոր իր վոստունը համապատասխանի շղթայի յերկարությանը:

Վրա հասնող զիշերն սկսեց աղվեսաձագին խիստ անհանգստացնել: Նա հա դուրս եր գալիս արկղից և իւկույն, մի փոքր ձայն լսելիս, նորից մտնում եր իր բունը, քաշքում եր իր շղթան և առաջին թաթերով բոնած կատաղաբար կրծում եր նրան:

Հանկարծ նա կանգ առավ, կարծես թե ականջ եր դնում և վեր անկերով իր փոքրիկ սև քիթը, արձակեց մի կարծ, դողդուն ձայն:

Այդ կրկնվեց մի յերկու անդամ: իսկ ընդմիջումների ընթացքում աղվեսի ձագը կրծում եր իր շղթան ու վազ եր տալիս բնի շուրջը: Վերջապես հենց նրա կանչի պատասխանը, հեռվից լսվեց մայր աղվեսի ձայնը: Մի քանի ըոտե անց՝ բակում թափված փայտերի վրա յերկաց մի ինչ վոր կերպարանք: Աղվեսաճուտը, չափազանց հուզված, թագնվեց իր անկողնում, իսկույն ելի դուրս թռափ ու դիմավորեց մորը մի այնպիսի ցնծությամբ, վորպիսին միայն աղվեսը կարող է հայտնաբերել:

Մայրը կայծակի արագությամբ բոնեց նրան ու

յետ վազեց. այն հույսով, վոր ձագին կտանի իր յեկած ճանապարհով: Բայց նրա հաշիվը սխալ եր: Շղթան ձգվեց. նրա սաստիկ զարկը ձագին խրեց մոր բերանից ու յետ շպրտեց մեծ թափով: Այդ ժամանակ տան լուսամուտը բացվեց: Մայր աղվեսը վախեցավ ու թողեց փախավ դարսված փայտերի միջով:

Դրանից մի ժամ, հետո աղվեսի ձագը վնչ վընդուած եր և վնչ ել պատեսատ զարնվում: Ցես լուսամուտից դուրս նայեցի և լուսնի լույսի առակ տեսա զետնի վրա մեկնված մայր աղվեսին մի ինչ վոր բան կրծելիս: Շղթայի զնզպնգոցն ինձ բացատրեց բանի ինդելությունը: Այդ անողոք շղթան եր, վոր մայր աղվեսն ուզում եր կըրծել, բայց փոքրիկ Տին, —մենք այդպես եյինք կանչում աղվեսի ձագին —այդ ժամանակ ուղարկելով հանգամանքից, ընկել եր մոր կրծքին ու ծծում եր:

Ցիրը յես տնից դուրս յեկա, աղվեսը փախավ անտառ, բայց արկղի մոտ, վորսեղ Տին եր կապված, ընկոծ եյին յերկու սատկած անտառային մուկ, դեռ տաք ու արտոնուա: Պարզ ե վոր սիրող մայրն ընթրիք եր բերել իր ձագի համար:

Ցես առավոտյան տեսա, վոր Տինի վզկապի մոտ շղթան չափազանց փալլուն եր:



Մի անգամ անտառում շրջելիս անցնում եյի աղվեսի քանդված վորչի մոտով։ Թշվառ մայրը՝ յեկել եր այստեղ և հանել հողից իր ձագերին։ Նրանք յերեքով պառկած եյին գետնին։ Մայրը մաքուր լիզել եր նրանց և մոտերը թողել եր յերկու հավ, իհարկե մեր հավերից։ Նոր փորած հողի շուրջը շատ հետքեր կային, վորոնք կարող եյին պատմել ինձ կտառքածի մասին։ Այդտեղ մայրաղվեսը ամբողջ գիշերը պահպանել եր իր փոքրիկներին։ Նա բերել եր նըրանց համար սովորական ուտելիքը, իր վորսի պտուղը։ Նա պառկել եր նրանց հետ կողք կողքի, ցանկանալով նրանց տաքացնել և կերակրել առաջվա պես։ Բայց փափուկ, թավամաղ մորթիների տակ նա գտել եր միայն սառած, փետացած մարմիններ ու պաղած քթիկներ, վոր անշարժ եյին և չելին պատասխանում նրա գուրգուրանքներին։


Նոր փորած հողի վրա հետքերը ցուց ելին տալիս այն տեղը, վորտեղ նա պառկել եր լուռ, վշտալի, չինացնելով աչքերն իր անշնչացած ձագերից և այնպես վողբալով, ինչպես ընդունակ ե վողբալու մի վայրենի մայր իր ձագերի համար։ Այդ որվանից, նա այլևս չեր վերադառնում իր քանդված վորջը, վորովհետեւ հիմա արդեն գիտեր, վոր իր ճուտերը մեռած են։

¶

Մեր գերի Տինը, աղվեսի ձագերից ամենաթաւյլը, ժառանգել եր ամբողջովին մոր սերը։

Հավերի պաշտպանության համար արձակված եյին շները։ Բանվորին ել հրամայված եր վոր նա հենց աղվեսին տեսնելիս վրան կրակ բանա։ Մի այդպիսի հրաման ել ինձ եր տրված, բայց յես հաստատ վորոշել եյի յերբեք չկատարել այդ հրամանը։

Տինի գերության յերկրորդ գիշերը յես լսեցի նրա շղթայի զնդոցը։ Դուրս նայեցի ու տեսա, վոր մայրաղվեսն արդեն այնտեղ, իր ձագի բնի մոտ յեռանգով փոս ե փորում։ Յերբ փոսն այնքան խորացավ, վոր ինքնաղվեսը կարող եր այնտեղ թագնվել, շղթայի ազատ մասը ցցեց փոսը և նրան հողով ծածկեց։ Յերկի նա կարծում եր, վոր այդ կերպ իր ձագին կաղատի շղթայից։ Կարծելով վոր արդեն տարել ե հաղթությունը, բռնեց Տինի վզակոթից և նրա հետ վեր վազեց փայտի վրայով։ Բայց ափսոս։ Տինը պինդ ձգված շղթայից վզակոնծիւտալով, յետ գլորվեց։



Թշվառ փոքրիկ արարածն աղեկառուր վժժում եր արդեն իր բնում։

Այդ գիշեր աղվեսը կրկին վերապարձագ: Մայրն էր ձագի համար դարձյալ մի հավ եր բերեւ վոր հաղեցնի նրա քաղցը: Նա յերեխ այնպես եր կարծում, վոր Տինն ուրիշ ուտելիք չի ստանում բացի եր բերածից:

Հենց այդ համս եր, վոր հորեղբորս առիթ ավեց հետեւու աղվեսի գիշերային արկածներին:

Իմ ամբողջ անձնական համակրանքը մայր-աղվեսի կողմն եր և չեյի ուղում նոր կոսորածին մասնակցություն ունենալ: Հետեւյալ գիշերը հորեղբայրս ինքը հրացանը ձեռքին պահապան կանգնեց մի ժամանակից: Յերբ ցըտեց ու լուսինն ել ծածկվեց անպերով, նա մտարերեց, վոր ինքն ուրիշանհետաձըզելի զորձեր ունի, դրա համար ել իր տեղը կանգնեցրեց մեր բանվոր Պոդին:

Սակայն գիշերային հանգստությունն ու լարված ուշադրությունը ներկործեցին նրա ջղերի վրա, նրան տիրեց մի տեսակ անհանգստություն: Յեվ յերբ մի ժամից հետո լսեց հրացանի բարձրաձայն կրակոց՝ մենք մի փոքր ել չկասկածեցինք, վոր նա իդուր տեղը վառուդ եր փչացնում:

Առավոտյան մենք համոզվեցինք, վոր մայր-աղվեսն առանց հոգացողության չի թողել իր ձագին: Հետեւյալ գիշերը նորից հորեղբայրս հրացանը վերցրեց ու գնաց հսկելու, վորովհետեւ հավանոցից մի հավ ևս անհայտացել եր:

Հրացանի ձայնը լսվեց այն ժամանակ, յերբ մթնել եր, բայց աղվեսը թողած իր վորսը՝ փախել եր: Սակայն նույն գիշերը մայր-աղվեսն ելի վորձել

եր մոտենալու Տինին: Լսվեց յերկրորդ կրակոցը: Չնայած դրան հետեւյալ ուրը շղթան ելի պայզում եր և այդ ցույց եր տալիս, վոր մայրը ձագին ազատելու համար մի քանի ժամ տամաներով կրծել եղթան:

Այդպիսի քաջությունն ումայրական սիրո ուժը մեր մեջ պետք եր գարթեցնելին յեթե վոչներողամտություն գեղինը պազմոնքները, գոնե, ամենայն դեպս հարգանք: Յեվ մյուս գիշեր մեզանից վոչվոք հոկոզություն չունեցավ հրացանը ձեռքին:

Ել ինչի լեր պետք այդ հսկողությունը: Ում մըտքից կարող եր անցնել, վոր աղվեսը նորից կկրկներ իր ձագին կերակրելու և աղատելու փորձը, յերբ նրան արտաքսել եյին վրան յերեք անգամ կրակելով:

Բայց մենք բոլորս մոռացել եյինք, վոր այդ անողը մայրական սերն եր:

Չորրորդ գիշերը լես տեսա թե ինչպես փոքրիկ աղվեսագի սրտամաշ ծղրտոցի ժամանակ փայտերի վրա յերեաց սովորական անորոշ կերպարանքը: Սակայն այս անգամ նա Տինի համար ուտելիք չեր բերել: Միթե այդ համարձակ ու փորձված վորսորդն այս անգամ հանդիպել եր անհաջողության, կամ թե հավատացել եր վոր իր ձագին զերող մարդիկ կարող եյին կերակրել իր ճուտին:



Այդպիսի բան չկար: Այդ վայրենի մոր գեպի իր ձագն ունեցած սերը, նրա ատելությունը դեպի իր հալածաղները, միշտ ել անփոփոխ եյին: Նա միայն մատծում եր, թե ինչպես անի, վոր իր ձագն ուժաւառ չլինի, ինչպես ողնի իր ձագին, վոր նա

գերությունից ազատվի: Բայց այդ բոլորն ել իզուր եր

Այս վերջին անգամ նա հայտնվեց ստվերի նման
և յետ գնաց բերանում մի ինչ փոք սկ բան բռնած:

Առավոտյան փոքրիկ Տինի բնի մոտ մենք գը-
տանք միմյան չկըծած շղթան: Յեղել են դեպքեր,
յերբ աղվեսներն իրենց ձաղերին գերությունից
ազատելու համար, կծոտելով սպանել են նրանց:
Ալդես ել պատահեց այս անգամ: Մայր-աղվեսը
կրծել եր Տինի վիզը հենց այնտեղից, վորտեղ շըդ-
թան եր կապած և տարել եր նրա տաք մարմինն
եռ հայրենի անտառը:

Յերբ ձյունն իր թափ սպիտակ ծածկոցով պա-
րուբում ե գետինը, այն ժամանակ սովորաբար կա-
տարվում ե անտաւների վերաքննությունը: Շրջելով
երինդիլյան անտառում՝ յես համոզվեցի, վոր աղվեսն
այլս այս տեղերում չի թափառում: Թե ուր եր
գնացել այդ մասին անտառն ինձ վոչինչ չասաց և
միայն մի բան ինձ հայտնի յեղափ. այդ այն ե,
վոր նա ալիս այստեղ չեր: Գուցե նա ուրիշ տեղ
եր գնացել՝ վոր մարդկանցից ու շներից հեռու լինի:
Գուցե հորեղբորիցս ավելի հաջող վորսորդի վրան
եր դարձեր:



Հ. Ա. ՄԱՅՐԱԿԱՆԻԱՆ

Ա. Ա. ԱՎԱՍԻՆ

«Ազգային գրադարան»



NL0383332

ԳԻՆՅ 50 Կ.

989

989

Сетон томисон

Спринг Фильдская

лисица

ГИЗ С С Р Армении Эривань